
ՀԱՄԱՉԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆԱՐԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դեռևս քսաներորդ դարի երկրորդ կեսից գիտության փիլիսոփայության կարևորագույն վեճերից մեկը վերաբերում էր գիտական տեսությունների թարգմանելիության կամ համաչափելիության հիմնախնդրին: Ինչպե՞ս ենք մենք համեմատում միևնույն խնդրի շուրջ ձևավորված երկու մրցակցող տեսությունները և ի՞նչի հիման վրա ենք նախապատվություն տալիս այս կամ այն տեսությանը: Եվ ընդհանրապես, արդյոք մենք ունենք բավարար ռացիոնալ մեթոդ (չափանիշ, սկզբունք, կանոն) նման համեմատություն և ընտրություն կատարելու համար:

Գիտական տեսությունների համաչափելիության հիմնախնդիրը և դրա շուրջ քննարկումները ավելի լավ ներկայացնելու համար կարելի է ձևակերպել հետևյալ հարցը. արդյոք գիտական տեսությունները համաչափելի են: Արդյոք հնարավոր է թարգմանելիություն գիտական տարբեր տեսությունների լեզուների միջև:

Նշենք, որ սովյալ հիմնախնդրում ներառված է թարգմանելիության հարցը այն պարզ պատճառով, որ համաչափելիությունը հենց ենթադրում է թարգմանելիություն: Գիտական տեսությունների թարգմանելիությունը նշանակում է նրանց լեզուների՝ հասկացութային ապարատի թարգմանելիություն: Այսինքն՝ երկու տեսություններ թարգմանելի են, եթե մեկի հասկացությունները հնարավոր է արտահայտել մյուսի լեզվով՝ առանց էական փոփոխությունների: Եթե գիտական տեսությունների լեզուները թարգմանելի են, նշանակում է՝ դրանք համաչափելի են: Այսինքն՝ այդ տեսությունները համեմատելու և դրանց միջև ընտրություն կատարելու ընդհանուր հիմք ունենք: Օրինակ՝ Նյուտոնի դասական մեխանիկան և Էյնշտեյնի ընդհանուր հարաբերականության տեսությունները համաչափելի կլինեն, եթե նյուտոնյան մեխանիկայի «ձգողականություն» հասկացությունը հնարավոր լինի արտահայտել ընդհանուր հարաբերականության հասկացություններով՝ պահպանելով դրա հիմնական նշանակությունը:

Այս հիմնախնդրի շուրջ քսաներորդ դարի երկրորդ կեսին ձևավորվել են երկու հակադիր տեսակետեր: Դրանցից առաջինի համաձայն՝ գիտական տեսությունները համաչափելի են, այսինքն՝ հնարավոր է այդ տեսությունների լեզուների թարգմանելիություն մեկից մյու-

սին: Իսկ երկրորդ տեսակետի համաձայն, որը ժամանակային առումով ավելի ուշ է առաջ եկել, գիտական տեսությունները համաչափելի չեն, և նրանց միջև թարգմանելիություն հնարավոր չէ:

Յուրաքանչյուր տեսակետ դիտարկենք առանձին: Նախ պետք է նշել, որ տասնիններորդ դարում նման հարցի քննարկումն ուղղակի անհեթեթություն էր: Չէ՞ որ մենք որպես կենդանի օրինակ ունեինք մեծ քայլերով զարգացող գիտությունը, որտեղ գիտնականները փաստորեն համեմատում էին մրցակցող տեսությունները և ընտրություն կատարում դրանց միջև: Փիլիսոփաներին մնում էր միայն պարզել, թե ի՞նչ սկզբունքով էր կատարվում այդ ընտրությունը, ինչի հիման վրա այս կամ այն տեսությունը ավելի նախապատվելի էր մյուսից:

Բացի դրանից, արդեն քսաներորդ դարի առաջին կեսին տրամաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչները զարգացրին այն դրույթը, որ յուրաքանչյուր գիտական տեսություն հնարավոր է արտահայտել ձևական տրամաբանական լեզվով: Այս նոր մոտեցումը բավականին տարածված էր: Նման համընդհանուր ֆորմալ համակարգի մշակումը թույլ կտար մեզ բոլոր տեսությունները արտահայտել միևնույն լեզվով: Տրամաբանական պոզիտիվիստները գտնում էին, որ այդ միասնական լեզուն ֆիզիկայի լեզուն է: Նրանք զարգացնում են ֆիզիկալիզմի թեզը: Ավելին, տրամաբանական պոզիտիվիստները դա ներկայացնում էին որպես գիտական և ոչ գիտական տեսությունների սահմանազատման չափանիշ: Այսինքն, եթե տեսությունը հնարավոր չէ արտահայտել այդ լեզվի, տվյալ դեպքում՝ ֆիզիկայի հասկացություններով, ապա այն պարզապես չի կարող լինել գիտական: Այսպիսով, հեշտությամբ լուծվում էին համաչափելիության և թարգմանելիության հետ կապված խնդիրները: Մնում էր միայն նման լեզվի մշակումը:

Տրամաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչները այնքան վստահ էին նման համընդհանուր լեզվի հայտնաբերման հնարավորության մեջ, որ արդեն սկսեցին խոսել տարբեր գիտությունների տեսությունների թարգմանելիության և մեկ հիմնարար գիտական տեսության հանգեցնելու մասին: Եթե մինչ այդ խոսքը միայն մեկ գիտության ներսում տարբեր տեսությունների թարգմանելիությանն ու համաչափելիությանն էր վերաբերում, ապա այժմ ամեն ինչ ավելի մեծ ծավալներ էր ընդունում: Նրանք կարծում էին, որ հնարավոր է բոլոր գիտակարգերը հանգեցնել մեկ հիմնարար գիտության՝ ֆիզիկայի: Հետևաբար հնարավոր էր դառնում նաև մեկ հիմնարար և համընդհանուր գիտական լեզվի գոյությունը, որով պետք է արտահայտված լինեին բոլոր գիտական տեսությունները: Նման լեզվի մշակման բազմաթիվ փորձեր եղան, սակայն ապարդյուն:

Ամփոփելու համար նշենք, որ նույնիսկ եթե ապարդյուն էին տրամաբանական պոզիտիվիստների մեկ միասնական, համընդհանուր

լեզվի մշակման փորձերը, համենայնդեպս գերիշխող էր այն մոտեցումը, որ մրցակցող գիտական տեսությունները համաչափելի են, և հնարավոր է թարգմանելիություն նրանց լեզուների միջև: Այս դրույթի կողմնակիցները պնդում էին, որ տեսությունները եթե նույնիսկ արտահայտված են էապես տարբեր և ընդհանրության ոչ մի եզր չունեցող լեզուներով, ապա գոյություն ունեն տեսությունից անկախ, չեզոք հետազոտական լեզուներ, որոնց միջոցով էլ իրականացվում է թարգմանելիությունը: Հենց նման լեզուների գոյությունն է հնարավոր դարձնում գիտական տեսությունների համաչափելիությունը:

Քսաներոդո դարի երկրորդ կեսին, երբ այս հարցերի քննարկումների կենտրոնում հայտնվում են Կունը և Ֆեյերբաքենդը, իրավիճակը փոխվում է: Նրանք հակադրվում են այն մոտեցմանը, որի համաձայն գիտական տեսությունները համաչափելի են, և հնարավոր է թարգմանելիություն երկու գիտական տեսությունների լեզուների միջև: Տարբեր գիտական լեզուներ ստեղծվում են տարբեր լեզուների հիման վրա, որոնց մեջ ընդհանուր ոչինչ չկա: Նույնիսկ նույն բառով արտահայտված մեծությունները տարբեր գիտական տեսություններում տարբեր իմաստներ ունեն, և հնարավոր չէ գտնել որևէ ընդհանուր բան նրանց միջև: Օրինակ, ըստ Կունի՝ «իներցիա» հասկացությունը Գալիլեյի և Նյուտոնի տեսություններում էապես տարբեր նշանակություն ունի¹:

Ըստ Կունի և Ֆեյերբաքենդի՝ հնարավոր չէ որևէ տեսության կամ հարացույցի լեզվով որևէ բան պնդել կամ մերժել մեկ այլ՝ էապես տարբեր, մրցակցող տեսության կամ հարացույցի որևէ դրույթի մասին: Նրանք մերժում էին նաև տեսությունից անկախ, չեզոք հետազոտական լեզուների գոյությունը: Ստացվում է, որ ըստ Կունի և Ֆեյերբաքենդի՝ հնարավոր չէ գիտական տեսությունների լեզուների թարգմանելիություն: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպես է հնարավոր երկու տեսությունների կամ հարացույցների համաչափելիություն, եթե չկա ոչ մի ընդհանուր բան դրանց միջև:

Կունը մասնավորապես պնդում էր, որ երկու հաջող տեսությունների մրցակցությունը պահանջում է մի լեզու, որով երկուսն էլ թարգմանվեն առանց կորստի և աղավաղման: Սակայն նման լեզու չի կարող լինել: Եթե նույնիսկ փորձենք տեսությունը թարգմանել որևէ այլ լեզվի, ապա, միևնույնն է, նրա հիմնական հասկացությունները բոլորովին այլ նշանակություն կունենան, կկորցնեն իրենց սկզբնական իմաստը: Յուրաքանչյուր տեսություն իրականության նկարագրություն է: Եվ եթե մի տեսության շրջանակներում առաջանում են անոմալիաներ, որոնք չեն բացատրվում այդ տեսության շրջանակներում, նշանակում է, որ մենք գործ ունենք այլ իրականության հետ: Այնուհետև առաջանում են նոր տեսություններ, որոնք բացատրում են այդ անոմալիաները, հետևաբար այդ տեսությունները նկարագրում են նոր իրականություն: Փաս-

¹ See u Кун Т. Структура научных революций. М., 2009, էջ 140:

տորեն այդ տեսությունները գործ ունեն տարբեր իրականությունների հետ և չեն կարող ոչ մի կապ ունենալ իրար հետ²:

Նույնը կարող ենք ասել նաև գիտական հարացույցների մասին: Ըստ Կունի՝ յուրաքանչյուր գիտական հարացույց ունի իր սեփական լեզուն և չափանիշները: Չկան ոչ մի վերհարացույցային լեզու և չափանիշ, որոնք հնարավոր կդարձնեն թարգմանելիությունը: Հետևաբար խոսք անգամ չի կարող լինել մրցակից հարացույցների համաչափելիության մասին³:

Ֆեյերաբենդը գրում էր, որ տարբեր գիտական տեսություններ աշխարհին նայում են տարբեր տեսանկյուններից և բացատրում են արտաքին աշխարհը տարբեր լեզուներով: Այդ տեսությունները թեև քննարկում են նույն երևույթը, բայց տարբեր տեսանկյուններից: Տարբեր տեսությունների լեզուները չենք կարող թարգմանել մեկը մյուսին, քանի որ դրանք օգտագործում են իրար հետ բոլորովին կապ չունեցող հասկացություններ: Օրինակ՝ Արիստոտելը, Նյուտոնը և Էյնշտեյնը բոլորովին այլ կերպ էին բացատրում քարի ընկնելը: Ըստ Արիստոտելի՝ քարն ընկնում է, քանի որ ձգտում է իր բնական նպատակին: Ըստ Նյուտոնի՝ քարն ընկնում է, քանի որ նրա վրա ազդում է երկրի ձգողականության ուժը: Իսկ ըստ Էյնշտեյնի՝ քարը ոչ թե ընկնում է, այլ կատարում է ուղղագիծ հավասարաչափ շարժում կորացած տարածության մեջ⁴: Ինչպես տեսնում ենք, այս երեք տեսությունները բոլորովին տարբեր բաների մասին են խոսում: Առաջինը խոսում է նպատակին ձգտելու, երկրորդը՝ մարմինների միջև ձգողականության ուժի, իսկ երրորդը՝ կորացած տարածության մեջ ուղղագիծ հավասարաչափ շարժման մասին:

Այս կապակցությամբ Շեյպերը գտնում էր, որ անհամաչափելիության գաղափարը Կունին և Ֆեյերաբենդին հանգեցրին իրենց ամենակարևոր դրույթներից մեկի ձևակերպմանը: Երկու գլխավոր կիրառվող տեսություններ, որոնք խորապես տարբեր կերպ են ներկայացնում աշխարհը, չեն կարող նույնիսկ մրցակից անվանվել: Մենք չենք կարող նույնիսկ ձևակերպել այն գլխավոր հարցը, որի շուրջ դրանք կարող էին վիճել⁵:

Այսպիսով, չեզոք հետազոտական լեզուների, գիտական տեսությունների լեզուների միջև թարգմանելիության անհնարինությունը, ինչպես նաև մրցակցող կոնցեպտուալ ծրագրերի միջև հարաբերությունների բացակայությունը դարձան հետպոզիտիվիստական իմացաբանության հիմնական խնդիրներից:

² Տե՛ս նույն տեղը, էջ 147-172:

³ Տե՛ս **Лакатос И.** Фальсификация и методология научно-исследовательских программ. М., 2001, էջ 144:

⁴ Տե՛ս **Фейерабенд П.** Против метода. М., 2007, էջ 147-149:

⁵ Տե՛ս **Shapere, D.** The Structure of Scientific Revolutions. Phil. Rev. 1964, էջ 383-394:

Հարկ է նշել, որ այսքանով համաչափելիության հիմնախնդրի շուրջ ծավալված քննարկումները չեն սահմանափակվում: Մինչ հետագա քննարկմանն անցնելը նշենք, որ թարգմանելիությունը երկու իմաստով էր հասկացվում: Թարգմանելիություն՝ ինչպես տեսական և հետազոտական լեզուների միջև, այնպես էլ երկու մրցակցող տեսությունների միջև: Ավելացնենք նաև, որ Կունն ու Ֆեյերաբենդը մերժում էին թարգմանելիության այս երկու տեսակն էլ:

Կունի և Ֆեյերաբենդի անհամաչափելիության թեզին հակադրվեցին բազմաթիվ փիլիսոփաներ: Նրանց մեջ հատկապես պետք է նշել Պոպերին և Լակատոսին: Նրանք համաձայն չէին այն դրույթին, որ գիտական տեսությունները անհամաչափելի են, և հնարավոր չէ թարգմանելիություն դրանց լեզուների միջև:

Այս հարցի շուրջ բավականին հետաքրքիր է Պոպերի դիրքորոշումը: Նա ինքնըստիներքյան ենթադրելի էր համարում այն, որ տեսությունները համաչափելի են, և առանձին քննարկման առարկա չի դարձնում այս հարցը: Գիտական տեսությունների ընտրության ռացիոնալ չափանիշների նրա գաղափարը լրիվ հենվում է համաչափելիության դրույթի ընդունման վրա:

Պոպերի և Կունի ամենագլխավոր հակադրությունը թերևս վերաբերում էր գիտական տեսությունների փոփոխության օրինաչափությունների գնահատականին: Ինչպես վերը նշվեց, Կունը գտնում էր, որ երկու գիտական հարացույց չունեն ոչ մի ընդհանուր բան: Մենք կարող ենք չափանիշներ մշակել և համեմատություններ անել միայն որևէ գիտական հարացույցի շրջանակներում: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես է տեղի ունենում մի գիտական հարացույցից մյուսին անցումը, ապա, ըստ Կունի, դա կատարվում է իռացիոնալ ճանապարհով: Չկան հարացույցների փոփոխման ռացիոնալ չափանիշներ, և մենք չունենք ոչ մի ռացիոնալ հիմք հարացույցները համեմատելու կամ դրանցից ավելի լավը կամ վատը ընտրելու համար⁶: Մինչդեռ Պոպերը կարծում էր, որ գիտական տեսությունների փոփոխումը տեղի է ունենում ռացիոնալ ճանապարհով:

Պոպերը գիտության զարգացման կողմնակից էր: Այսինքն, գտնում էր, որ գիտությունը գնալով զարգացում է ապրում, և գիտական տեսությունները փոխարինվում են ավելի լավ ու կատարելագործված տեսություններով: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինեն տեսությունը, որ համարվեր ավելի լավ ու կատարելագործված և զար փոխարինելու նախորդին: Այսինքն, ի՞նչ չափանիշներով են փոխվում գիտական տեսությունները:

Պոպերը առաջարկում է հետևյալ երեք չափանիշները, որոնց համապատասխան էլ տեղի է ունենում տեսությունների ընտրությունը:

1. Յուրաքանչյուր նոր տեսություն պետք է բացատրի նախորդ տե-

⁶ Տե՛ս **Կյոն Թ.**, նշվ. աշխ., էջ 73-83:

սության բոլոր դրույթները, չպետք է լինի ոչ մի երևույթ նախորդ տեսությունից, որ չբացատրվի նոր տեսության միջոցով:

2. Յուրաքանչյուր նոր տեսություն պետք է նոր կանխատեսումներ անի, որոնք հնարավոր չեն նախորդ տեսության շրջանակներում:

3. Այդ նոր կանխատեսումների մի մասը պետք է հաստատվի գիտափորձերի միջոցով⁷:

Ըստ Պոպերի՝ յուրաքանչյուր տեսություն, որ համապատասխանում է այս երեք չափանիշներին, ավելի հարուստ էմպիրիկ բովանդակություն և կանխատեսման ուժ ունի, քան նախորդը: Այս երեք չափանիշներին համապատասխանությունը մեզ բավարար հիմք է տալիս մի կողմ դնելու նախորդ տեսությունը և օգտվելու նորից:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ եթե Պոպերը ընդուներ անհամաչափելիության դրույթը, ապա դա ուղղակի կհակասեր գիտական տեսությունների փոփոխության իր չափանիշներին: Բացի դրանից, այն փաստը, որ նա ընդունում էր, որ գիտությունն անընդհատ զարգանում է, և այդ զարգացումը կարելի է ռացիոնալ վերակառուցել, արդեն խոսում է այն մասին, որ գիտական տեսությունների համեմատության ռացիոնալ չափանիշներ գոյություն ունեն:

Պոպերի այս հայացքներին համաձայն էր նաև Իմրե Լակատտը: Նախ նշենք, որ նա ևս Պոպերի նման ընդունում էր գիտական առաջադիմության գոյությունը և պոպերյան վերոնշյալ չափանիշները: Սակայն Լակատտը դիտարկում էր ոչ թե առանձին գիտական տեսությունները և դրանց միջև փոփոխությունները, այլ հետազոտական ծրագրերը:

Պետք է նշել նաև, որ թեև Լակատտն ընդունում էր Պոպերի առաջարկած չափանիշները, բայց համաձայն չէր Պոպերի այն դրույթի հետ, որ հին տեսությունը անմիջապես պետք է մի կողմ դնել և այլևս չվերադառնալ դրան: Նա պնդում էր, որ նոր տեսությամբ հնի փոխարինումը չպետք է տեղի ունենա շատ արագ: Բացի դրանից, եթե նույնիսկ հին տեսությունը մի կողմ ենք դրել, դա չի նշանակում, որ չենք կարող երբևիցե օգտագործել այն: Լակատտն առաջարկում էր հին տեսությունները պահել որպես պահեստային, որովհետև դրանք կարող են մեզ անհրաժեշտ լինել ցանկացած պահի:

Ըստ Լակատտի՝ եթե նույնիսկ երկու գիտական տեսությունների լեզուները տարբեր են, և հաճախ նույն տերմինը կարող է տարբեր նշանակություն ունենալ, դա չի նշանակում, որ այդ տեսությունները անհամաչափելի են: Ըստ նրա՝ թարգմանելիություն երկու էապես տարբեր տեսությունների միջև հնարավոր է: Սակայն անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր տեսության հիմքում ընկած հիմնական հարցը, որի շուրջ դրանք վիճում են, նույնը լինի, վերաբերի նույն խնդրին: Հակա-

⁷ Sté u **Поппер К.** Предположения и опровержения. М., 2004, էջ 401-403:

ռակ դեպքում անիմաստ է խոսել թարգմանելիության կամ համաչափելիության մասին: Այդ ամենի վառ օրինակը ֆիզիկան է, որն անընդհատ զարգանում է իրար հաջորդող մրցակից տեսությունների շնորհիվ: Թեև «գրավիտացիա» տերմինը տարբեր նշանակություններ ունի Նյուտոնի և Էյնշտեյնի տեսություններում, բայց դրանք խոսում են միևնույն երևույթի՝ ձգողականության մասին, չնայած Նյուտոնի տեսության մեջ խոսքը մարմինների իրար ձգելու երևույթի մասին է, իսկ Էյնշտեյնի մոտ՝ տարածաժամանակային կորացման մասին:

Գիտության փիլիսոփայության մեջ սրանով համաչափելիության խնդրի քննարկումները չեն ավարտվում: Ավելին, դրանք առավել հետաքրքիր և նույնիսկ անսպասելի զարգացումներ են ունենում հետագայում: Մանավորապես նկատի ունենք համաչափելիության ու գիտական տեսությունների ընտրության խնդրիներին ժամանակակից իմացաբան Լարի Լաուդանի տված լուծումները: Նախ ասենք, որ նշված երկու տեսակետներից ոչ մեկի կողմնակից նրան համարել չենք կարող: Ավելի ուշ կտեսնենք, որ նրա հայացքները բոլորովին այլ ուղղու վրա են դնում համաչափելիության հիմնախնդրի քննարկումները: Ավելին, դրանց շնորհիվ փոխվում է հիմնախնդրի ձևակերպումը:

Լաուդանը, չընդունելով Կունի, Ֆեյերբաբենդի և նրանց հետևորդների հայացքները, միաժամանակ քննադատում է նաև Պոպերին և նրա հետևորդներին՝ մասնավորապես Լակատոսին և Ուոտկինսին: Լաուդանը գտնում է, որ Պոպերը և իր հետևորդները համոզված էին, որ տեսությունների համեմատելիության հիմնական չափանիշը էմպիրիկ բովանդակությունն է: Մինչդեռ ինքը կարծում է, որ թեև մենք կարող ենք համեմատել տեսությունների էմպիրիկ բովանդակությունները, բայց այնուամենայնիվ դա բավարար չէ այն պոպերյան նախընտրելիության սանդղակով դասակարգելու համար: Բովանդակությունների համեմատելիությունը տեսությունների օբյեկտային լեզուների համեմատելիությունն է: Առանց թարգմանելիության բարձր մակարդակի՝ տեսությունների գնահատման պոպերյան մեխանիզմը փակուղի է մտնում: Նույն ձևով Պոպերի այն պահանջը, որ կիրառվող տեսությունները պետք է բացատրեն իրենց նախորդների անոմալիաները, ենթադրում է տեսությունների թարգմանելիության բարձր չափանիշներ: Առանց նման չափանիշների՝ մենք երբեք չենք կարող հաստատապես ասել՝ արդյոք նոր տեսությունը լուծո՞ւմ է իր նախորդի անոմալիաները, թե՞ ոչ:

Լաուդանը նույն կերպ քննադատության է ենթարկում նաև տեսությունների հավանականությունը հաշվելու Բայեսի թեորեմը, ըստ որի՝ հնարավոր է հաշվել տեսությունների հավանականությունը և դրա հիման վրա ընտրություն կատարել ավելի հավանական տեսությունների օգտին: Եթե մենք չկարողանանք մեր ունեցած տեսությունների լեզուները թարգմանել մեկը մյուսով, չենք կարող հաշվել նրանց

հավանականությունները մեկը մյուսի նկատմամբ: Թեև կարող ենք ցույց տալ, որ մի տեսությունը կառուցվածքային առումով լավ ձևակերպված է առանց մրցակից տեսությանը դիմելու, այնուամենայնիվ դա բավարար չէ մեկը մյուսի նկատմամբ նրանց հավանականությունը պարզելու համար:

Լատուանն ավելացնում է, որ գիտական տեսությունների համաչափելիության քննարկումներում բավարար ուշադրության չի արժանացել այն հանգամանքը, որ գոյություն ունեն տարբեր տեսությունները գնահատելու այլ օբյեկտիվ մեթոդներ, որոնք չեն պահանջում տեսությունների օբյեկտային մակարդակի լեզուների թարգմանելիություն: *Այսինքն, մենք կարող ենք գնահատել մեր մրցակից տեսությունները առանց թարգմանելիության*⁸:

Իր այս դրույթը հիմնավորելու համար Լատուանը նախ անդրադառնում է այն հարցին, թե ինչ ճանաչողական նպատակներ ունեն տեսությունները, կամ ավելի լայն առումով՝ գիտությունն ընդհանրապես: Մինչ Լատուանը այս հարցի քննարկումները առաջ են բերել հետևյալ նպատակները՝

- *խնդիր լուծելու առավելագույն հնարավորություն*. այսինքն՝ նոր տեսությունը պետք է լուծի ավելի մեծ քանակությամբ խնդիրներ, քան նախորդը: Օրինակ՝ Նյուտոնի մեխանիկան լուծում էր ավելի շատ խնդիրներ, քան Դեկարտինը,

- *առավելագույն հիմնավորվածություն ու տրամաբանական հաջորդականություն*. այսինքն՝ տեսությունը պետք է լինի ավելի հիմնավորված, և տրամաբանական հաջորդականությունը չխախտվի: Օրինակ՝ լույսի մասնիկ-ալիքային տեսությունն ավելի հիմնավորված էր փորձերով, քան միայն ալիքային կամ մասնիկային տեսությունները,

- *նվազագույն անոմալիաներ*. այսինքն՝ նոր տեսությունը չպետք է ունենա անոմալիաներ, կամ ունենա գոնե ավելի քիչ, քան իր նախորդը: Օրինակ՝ ընդհանուր հարաբերականության տեսությունը լուծում էր Մերկուրիի անոմալիան, որը նյուտոնյան մեխանիկայի թույլ կողմերից էր:

Ի տարբերության նախորդ հեղինակների՝ Լատուանը գտնում էր, որ առանց այս նպատակներից որևէ մեկի էլ մենք կարող ենք մշակել տեսությունների համեմատելիության մեխանիզմներ, որոնք տեսությունների օբյեկտային մակարդակների համեմատելիության կարիք չեն ունենա: Նա համոզված էր, որ գիտական տեսությունների համաչափելիության հիմնախնդրի շուրջ ձևավորված տեսակետների և դրանց կողմնակիցների հիմնական սխալն այն էր, որ նրանք կենտրոնացել էին միայն օբյեկտային մակարդակի վրա և քննարկում էին միայն օբյեկտային մակարդակի թարգմանելիությունը՝ անտեսելով այն հանգա-

⁸ Տե՛ս **Laudan L.**, Progress and its Problems. Towards a Theory of Scientific Growth. University of California Press, 1977, էջ 12:

մանքը, որ տեսությունների համեմատելիությունը չի ենթադրում միայն այդ մակարդակի և լեզվի թարգմանելիություն:

Փաստորեն, Լատուդանը հարցը քննում է միայն համեմատելիության հարթության վրա: Այսինքն՝ անկախ այն բանից՝ մեր տեսությունները համաչափելի են, թե ոչ, կարող ենք համեմատել դրանք: Ըստ նախորդ իմացաբանների՝ եթե տեսությունները անհամաչափելի են, դրանց համեմատելու մասին խոսք լինել չի կարող: Իսկ Լատուդանը գտնում է, որ առանց տեսությունների համաչափելիությունը կամ դրանք լեզուների թարգմանելիությունը պարզելու մենք կարող ենք օբյեկտիվ համեմատություն անցկացնել դրանց միջև: Լատուդանի մոտ գիտական տեսությունների «համեմատելիություն» և «համաչափելիություն» հասկացությունները այլևս չեն ենթադրում մեկը մյուսին: Հետևաբար, վերը նշված համաչափելիության հիմնախնդիրը փոխարինվում է համեմատելիության հիմնախնդրով:

Մինչ Լատուդանի դրույթի հիմնավորմանն անցնելը ձևակերպենք հիմախնդիրը. հնարավոր է արդյոք տեսությունների համեմատելիություն առանց համաչափելիության կամ թարգմանելիության:

Այժմ տեսնենք, թե ինչպես է հիմնավորում իր այս դրույթը Լատուդանը: Ըստ Լատուդանի՝ տեսությունների համեմատելիության օբյեկտիվ մեխանիզմներից մեկը *դրանց լուծած պրոբլեմների հաշվումն է*: Նրա համոզմամբ՝ յուրաքանչյուր տեսության ներսում հնարավոր է հաշվել, թե այդ տեսությունը քանի պրոբլեմ է լուծել: Հենց տեսությունների լուծած պրոբլեմների գումարային արժեքներն էլ կլինեն այն օբյեկտիվ հիմքը, որի հիման վրա կարող ենք կատարել մեր մրցակից տեսությունների համեմատությունը: Այս դեպքում մեզ այլևս անհրաժեշտ չէ թարգմանել մրցակից տեսությունների լեզուները, այլ բավարար է միայն մեկ գիտական տեսության շրջանակներում լուծված խնդիրների քանակը: Ուստի տեսության հիմնավորվածությունը կամ պարզությունը կարող է այնքան որոշակի լինել, որ որևէ կապ չունենա մյուս տեսության հիմնական պնդումների հետ: Այստեղ նույնպես կարող ենք ասել, թե ինչքանով է հիմնավորված մի տեսության որևէ դրույթ առանց մրցակից տեսության լեզվի թարգմանելիության:

Ինչպես նշեցինք, Լատուդանը համաձայն չէր այն հեղինակների հետ, որոնք գիտության նպատակը համարում էին խնդիր լուծելու առավելագույն հնարավորության, առավելագույն հիմնավորվածության ու տրամաբանական հաջորդականության և նվազագույն անոմալիաների ապահովումը: Նա գտնում էր, որ սրանք նպատակներ են, որոնք իրականացվում են յուրաքանչյուր տեսության ներսում: Այդ պատճառով դրանք չեն կարող լինել միջտեսական համեմատելիության բավարար հիմք: Նման հիմք կարող են լինել մետամակարդակի նպատակները: Այսինքն՝ այն նպատակները, որոնք պետք է ընդհանուր լինեն բոլոր գիտական տեսությունների կամ գիտությունների համար, և որոնք

դրվում են յուրաքանչյուր գիտական տեսության առջև: Այդ նպատակները ոչ մի կապ չունեն յուրաքանչյուր առանձին տեսության կամ գիտության ներքին նպատակների հետ: Լուդանը մետանպատակներ ասելով հասկանում է գիտական տեսությունների խնդիրներ լուծելու կարողությունը և առավել արդյունավետությունը: Այսինքն՝ գիտական տեսությունները միմյանց հետ համեմատելու, դրանք գնահատելու և դրանց միջև ընտրություն կատարելու միակ բավարար հիմքը, ըստ Լաուդանի, հնարավորինս շատ և կարևոր խնդիրներ լուծելու կարողությունն է⁹: Բացի այդ, տեսությունների արժանիքների իրական գնահատականը ևս կախված չէ օբյեկտային լեզուների թարգմանելիությունից: Այս պարագայում ևս տեսությունների իրական արժանիքները գնահատվում են մետամակարդակի նպատակներին համապատասխանության կամ անհամապատասխանության դիրքերից:

Լաուդանի կարծիքով, եթե ունենք աշխարհի մասին բոլորովին հակասական երկու տեսություններ, ապա դրանցից որևէ մեկին հարող գիտնականները կարող են չհասկանալ մրցակից տեսությունը իրենց տեսության լեզվի տեսանկյունից: Բայց սրանից անմիջապես չի բխում, որ նրանք չեն կարող գնահատել մրցակից տեսության արժանիքները: Ըստ Լաուդանի, եթե ունենանք մետամակարդակի նպատակներ, ապա նրանք անպայման կարող են գնահատել տեսությունների հաջողությունները կամ անհաջողությունները: Վերջիններս էլ պայմանավորված կլինեն այդ նպատակներին համապատասխան կամ անհամապատասխան լինելով:

Այսպիսով, ստացվում է, որ եթե տեսությունները անհամաչափելի են օբյեկտային մակարդակում, քանի որ դրանք թարգմանելի չեն, դեռևս չի նշանակում, որ նրանք անհամաչափելի են նաև մետամակարդակում: «Լայնորեն տարածված դրույթը, որ չթարգմանելիությունը անհրաժեշտորեն հանգեցնում է ճանաչողական ռեյատիվիզմի, ուղղակի սխալունք է»¹⁰: Հնարավոր է տեսությունների համեմատելիություն առանց օբյեկտային մակարդակի թարգմանելիության և համաչափելիության:

Բանալի բառեր – թարգմանելիություն, համաչափելիություն, տրամաբանական պոզիտիվիզմ, ֆիզիկալիզմ, գիտական հարացույց, էմպիրիկ բովանդակություն, համեմատելիություն, գիտական անումայիա, մետանպատակ

НАРЕ ГРИГОРЯН – *Проблемы соизмеримости и сопоставимости.* – Проблема переводимости (соизмеримости) научных теорий – одна из важнейших в философии науки второй половины XX века. В статье рассматривается, возможно ли сопоставить две конкурирующие научные теории и на каком основании предпочтение отдаётся одной из них, достаточно ли рациональных методов (критериев, принципов) для сравнения и выбора. Современная философия науки, од-

⁹ Sté u **Laudan L.**, Beyond Positivism and Relativism. Westview Press, 1996, էջ 11:

¹⁰ Նույն տեղում, էջ 12:

нако, пытается развить эту проблему в ином направлении.

Ключевые слова: *переводимость, соизмеримость, логический позитивизм, физикализм, научная парадигма, эмпирическое содержание, сопоставимость, научная аномалия, метацель*

NARE GRIGORYAN – *The Issues of Commensurability and Comparability.* – The problem of translatability or commensurability of scientific theories is one of the most important problems in the philosophy of science of the second half of the twentieth century. The article discusses how we can compare the two competing scientific theories about the same issue and on what basis we prefer this or that scientific theory, and in general if we have enough good methods (criteria, principles, rules) for such kind of comparison and selection between competing scientific theories. Modern philosophy of science, however, is trying to develop this problem in a different direction.

Key words: *translatability, commensurability, logical positivism, physicalism, scientific paradigm, empirical content, comparability, scientific anomaly, meta-aim*